«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր. Կապ, շաղկապ, դրանց արտահայտութբունը գեղարվեստական գրականության մեջ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Միասյան Քրիստինա

Դպրոց՝ Երևանի հ.175 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Կապը որպես խոսքի մաս և դրա արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ……5
2. Շաղկապը որպես խոսքի մաս և դրա արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ……9

Եզրակացություն……16

Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Խոսքի մասերը լեզվի բառապաշարի բառաքերականական խմբերն են, որոնք ընկած են քերականական կառուցվածքի հիմքում:

Խոսքի մասերը հատուկ են աշխարհի բոլոր լեզուներին, բայց, պայմանավորված լեզվի հիմնականում կառուցվածքային տիպով, տարբեր է նրանց որոշման հիմունքը, ուրեմն և՝ քանակը:

Խոսքի մասերը, ինչպես և մյուս լեզվական կատեգորիաները, ունեն նաև իմացաբանական արժեք և արտացոլում են մարդու մտածողության զարգացումը՝ աստիճանական առաջընթացի ժամանակ իմացության և լեզվի հարստացման ճանապարհին:

Խոսքի մասերը կազմում են բարդ համակարգ, որի բաղադրիչները միմյանց նկատմամբ նույնանման կապի ու հարաբերության մեջ չեն: Կան անմիջականորեն հարաբերակից խոսքի մասեր (օրինակ, կապը և շաղկապը, մի կողմից՝ գոյականը, ածականը, թվականը, մակբայը, մյուս կողմից՝ դերանունը) և ոչ-անմիջականորեն հարաբերակից խոսքի մասեր (օրինակ՝ ձայնարկությունը և բայը, թվականը և շաղկապը):

Քերականական խոսքի մասեր են կապը և շաղկապը: Չնայած որոշակի աղերսներին՝ դրանք չի կարելի նույնացնել, քանի որ դրանց միջև կան իմաստային և կիրառական զգալի տարբերություններ:

Կապերը, հանդես գալով որպես առանձին, ինքնուրույն բառային միավորներ, զուրկ են նյութական նշանակությունից, արտահայտում են սոսկ քերականական իմաստ և կատարում են շարահյուսական դեր՝ դրսևորելով ստորադաս բառերի՝ գերադասների նկատմամբ ունեցած զանազան հարաբերությունները:

Ի տարբերություն կապերի՝ շաղկապները ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման դեր չունեն: Պարզ նախադասության մեջ դրանց դերը հիմնականում նախադասության համազոր անդամներ կապելն է, իսկ բարդ նախադասության մեջ արտահայտում են բաղադրիչների ամենաբազմազան ու տարբեր համադասական ու ստորադասական հարաբերություններ:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել **քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ կապը, շաղկապը և դրանց արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները.**

- ուսումնասիրել կապը որպես խոսքի մաս և դրա արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ,
- ներկայացնել շաղկապը որպես խոսքի մաս և դրա արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 18 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կապը նյութական իմաստից զուրկ է, քերականական զանազան հարաբերություններ արտահայտող խոսքի մաս: Դրվում է որևէ բառի վրա և որոշում նրա պաշտոնը նախադասության մեջ, հանդես գալիս որպես մեկ անդամ՝ կապվելով ստորոգյալի հետ պարագայական կամ խնդրային հարաբերությամբ:

Կապերն արտահայտում են հոլովական իմաստներ՝ կատարելով հոլովական վերջավորությունների դեր: Օրինակ՝ դրված է սեղանին ասելու փոխարեն կարող ենք ասել նաև՝ դրված է սեղանի վրա:

Ընդունված է տարբերակել կապերի երեք խումբ.

1. իսկական,
2. անիսկական,
3. կապական բառեր:

Կապերի այն խումբն է, որոնք գործածվում են հիմնականում կապի նշանակությամբ, թեև նրանց մեջ այս կամ այն չափով պահպանված է այն խոսքի մասի իմաստը և կիրառությունը, որից նրանք անցել են կամ անցնում են կապերին: Ըստ Մանուկ Աբեղյանի՝ անիսկական կապերն են միայն՝ պես, չափ, տեղ, հետ, դեմ, մոտ, վրա բառերը:

Կապերի այս խմբի շրջանակները դեռևս որոշակիորեն չեն ճշգրտված ու հիմնավորված: Ոմանք անիսկական կապերի խմբին են դասում նաև այսպես կոչված կապական բառերը:

Այս խոսքի մասը առաջին անգամ կապ է անվանել նշանավոր լեզվաբան Մ. Աբեղյանը: Մինչ այդ այն անվանվել է նախադրություն : Ըստ լեզվաբան Մ. Ասատրյանի՝ այս եզրույթը գրաբարի համար ճիշտ էր, որովհետև կապերը գրաբարում գերազանցապես դրվում էին կապվող բառից առաջ, ինչպես՝ <<վասն մարդոյ>>, <<առանց նենգութեան>> <<ընդ աշակերտս>>, <<ի վերայ երկրի>> և այլն[1]:

[1]Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 304:

Աշակերտն առաջին հերթին պիտի ըմբռնի այս խոսքի մասի դերն ու նշանակությունը լեզվում: Դասն առավել արդյունավետ դարձնելու համար կարելի է օրինակները ներկայացնել պաստառներով կամ սահիկաշարով:

Սկզբում ուսուցիչը պետք է բերի օրինակներ: Ցանկալի է, որ դրանք լինեն գեղարվեստական գրականությունից, որպեսզի աշակերտը կարողանա հասկանալ նաև, թե ինչ նպատակով են կապերը գործածվում գեղարվեստական գրականության մեջ: Քանի որ կապը նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է, ոճական սահմանափակ երանգավորում ունի: <<Կապերի արտահայտչական հնարավորությունները բավականին համեստ են. դրանք հաճախ դրսևորվում են իրենց բնորոշ շարադասության խախտմամբ, կապի կրկնությամբ, ինչպես նաև որևէ հոլովաձևի կապով և առանց կապի ձևերի զուգորդությամբ, որոնք, ի հայտ գալով որպես հոմանիշներ, թույլ են տալիս ընտրություն կատարել և տվյալ համատեքստի համար կիրառել առավել արտահայտչական ձևը>>[2]:

Բերենք օրինակ Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից:

Սարի հովի ***պես*** ամպերի փեշով

Արծրվի թևին զարկեմ ու երթա՛մ.

Ջինջ աղբյուրի *պես* դալուկ անտառով

Չոր տերևները գրկեմ ու երթա՛մ...

Այս հատվածում, օրինակ, կապերը հանդես են գալիս համեմատության յուրօրինակ գունավորմամբ:

Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գրում է մի քանի կապեր, որոնցով աշակերտները կազմում են նախադասություններ՝ ուշադրություն դարձնելով, որ դրանք, հիմնականում միանալով որևէ բառի, դառնում են ոչ միայն ստորոգյալի, այլև բայի լրացում ընդհանրապես (չնայած դառնում են նաև գոյականի լրացումներ, ինչպես՝ պար սառույցի վրա, ճանապարհի դեպի անմահություն և այլն):

Օրինակ՝

Գնաց ***դեպի*** վիրավորը:

Դեպի վիրավորը գնացող սպան

Դեպի վիրավորը գնացողը

[2]Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992, էջ 269:

Աշակերտը պիտի իմանա, որ կապը և այն բառը, որի հետ գործածվում է (կապվող բառ), միասին դառնում են նախադասության մեկ անդամ և պատասխանում են մեկ հարցի: Առանձին որևէ հարց չի ստանում:

Դրանք լեզվում կատարում են գրեթե նույն դերը, ինչ հոլովական վերջավորությունները: Հենց դրանով է պայմանավորված, որ կապերը գործածության մեծ հաճախականություն ունեն: Օրինակ.

Գիրքը դրված է սեղանին (սեղանի ***վրա***):

Պատմում էին դրվագներ անցյալից (անցյալի ***մասին***):

Նրա կարծիքով (***ըստ*** նրա կարծիքի) աշխատանքը կարելի է ավարտել երեք օրում:

Նմանատիպ օրինակներ ուսուցիչը գրում է գրատախտակին, իսկ աշակերտները համապատասխան հոլովաձևերն արտահայտում են կապային կառույցով՝ միաժամանակ համոզվելով, որ ոչ բոլոր դեպքերում կարելի է հոլովով արտահայտել, և կապի գործածությունն անխուսափելի է (***նախքան*** վերադառնալը, տոնի ***առթիվ,*** երկու երկրների ***միջև,*** իր նախաձեռնության ***շնորհիվ*** և այլն):

Ուշադրություն են դարձնում նաև այն բանին, թե ինչ դիրք են գրավել կապերը կապվող բառի նկատմամբ: Դրանք կարող են դրվել կապվող բառից առաջ՝ ***նախադրություններ*** (առանց, դեպի, ըստ, ի հեճուկս, իբրև, որպես, հանուն, նախքան և այլն), կապվող բառից հետո՝ ***հետադրություններ*** (առթիվ, առջև, դեմ, զատ, ի վեր, համար, հետ, մասին, նման, պես, վրա, տակ և այլն), կապվող բառից թե՛ առաջ, թե՛ հետո՝ ***երկդրություններ*** (բացի, ընդդեմ, հանդեպ, շնորհիվ):

Օրինակ՝

Առանց քեզ, ըստ օրենքի, որպես մարդ, հանուն հայրենիքի

քո առջև, տոնի առթիվ, հոր նման, սեղանի տակ

նրանից բացի – բացի նրանից, քո շնորհիվ – շնորհիվ քեզ

Պետք է աշակերտների ուշադրությունը բևեռել այն փաստի վրա, որ մեր թվարկած կապերի մեջ կան և՛ պարզ կապեր՝ պես, մասին, շնորհիվ, և՛ բարդ կապեր՝ կցական (ընդդեմ, նախքան) և հարադրավոր (ի հեճուկս, ի վեր):

Հայ լեզվաբանների մեծ մասը կապերը բաժանում է երեք խմբի՝ իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր: Իսկական են միշտ որպես կապ հանդես եկող և չհոլովվող բառերը: Օրինակ՝ դեպի, մասին, բացի և այլն: Անիսկական են որպես կապ

գործածվող, սակայն հոլովվող բառերը, օրինակ՝ վրա-վրայից, վրայով, մոտ-մոտից, մոտով և այլն: Կապական են այն բառերը, որոնք այլ խոսքի մասի են պատկանում, բայց կարող են գործածվել նաև կապական արժեքով: Օրինակ՝ <<Ժամանակը (գոյական) արագ էր անցնում>>, <<Վազքի ժամանակ (կապ) ոտքը վնասեց>>:

Այս բաժանումը հիմնական դպրոցի դասագրքում արված չէ, սակայն կարծում ենք, որ աշակերտներին այս բաժանումը ավելի ճիշտ կկողմնորոշի, քանի որ հաճախ է հարց առաջանում, թե ինչպես կարող է կապը բնութագրվել որպես չթեքվող խոսքի մաս, այնուհետև հոլովվել:

ԳԼՈՒԽ 2. ՇԱՂԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շաղկապը նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է, որը իրար հետ միացնում, կապում է նախադասություններ և նախադասության համազոր անդամներ: Չունենալով նյութական իմաստ, չանվանելով առարկաներ, հատկանիշներ ու գործողություններ' շաղկապը արտահայտում է վերջիններիս բազմաթիվ ու բազմապիսի հարաբերությունները:

Որպես լեզվական միավորներ' շաղկապները ունեն իրենց յուրահատուկ իմաստներն ու շարահյուսական կիրառության ոլորտները: Սրանք, ինչպես և կապերը, մտնում են քերականական իմաստ արտահայտող խոսքիմասային բառախմբի մեջ և զուրկ լինելով նյութական նշանակությունից' կատարում են սոսկ շարահյուսական, կապակցական դեր:

Շաղկապները առաջացել են նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից: Լեզվի զարգացման վաղ շրջանում նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը հանդես են եկել որպես նախադասության ինքնուրույն անդամներ[3]:

Հետագայում շարահյուսական տարբեր կրառություններում այդ բառերը վերաիմաստավորվել են և սկսել են նշել նաև նախադասության անդամների և նախադասությունների միջև եղած իմաստային և շարահյուսական կապեր' միաժամանակ չկորցնելով իրենց բուն խոսքիմասային արժեքը:

Հետագայում նյութական իմաստի մթագնման և հարաբերության իմաստի զարգացման ճանապարհով այդ բառերը դադարել են նախադասության անդամ լինելուց և ծառայել ես որպես կապակցության միջոց' դառնալով սպասարկու բառեր: Այսպիսով նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից փոխանցում է կատարվել շաղկապների:

Խոսքի մասային այս փոխանցումները ներկայացնում են շաղկապների առաջացման ու զարգացման տարբեր փուլերը, երբ բառը սկսում է գործածվել խոսքիմասային համատեղ արժեքներով և այնուհետև աստիճանաբար ամրանալով կապակցական իր դերում' ձեռք է բերում նաև խոսքիմասային մի զուգահեռ արժեք' շաղկապական արժեք:

---

[3]Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1976թ.,էջ 42:

Ի վերջո սա հանգեցնում է այն բանին, որ լեզվի մեջ զուգահեռ խոսքիմասային կիրառություններ ունեցող որոշ բառեր աստիճանաբար կորցնում են իրենց նյութական կիրառությունները և հանդես են գալիս որպես սոսկ շաղկապ: Շաղկապները առաջանում են մեծ մասամբ դերանուններից, առանձին դեպքերում' գոյականներից, բայական ձևերից, մակբայներից, ինչպես նաև սպասարկու բառերից' կապերից և եղանակավորող բառերից:

Շաղկապներն ըստ կազմության լինում են պարզ, բարդ և ածանցավոր: Պարզ շաղկապեր են՝ և, ու, թե, որ, եթե, այլ, էլ, բայց, իսկ, թեկուզ, մինչ, սակայն, թեպետ, քան, կամ, ապա և այլն: Սրանք արմատական բառեր են և բաղադրիչների վերածվել չեն կարող: Բարդ շաղկապներ են՝ որովհետև, որպեսզի, մինչև, ուստի և, բայց և այնպես, հենց որ, քան թե, մինչև որ և այլն:

Բարդ շաղկապները գրվում են կա՛մ միացած, կա՛մ անջատ բաղադրիչներով: Միացած բաղադրիչներով գրվում են՝ այլև, նաև, այսինքն, որպեսզի, թեև, որովհետև, մինչդեռ, թեպետև, այնինչ, այնուամենայնիվ և այլն:

Անջատ կամ հարադրությամբ գրվում են՝ բայց և, բայց և այնպես, այն էլ, ինչպես էլ, ինչպես նաև, և կամ, ապա թե ոչ, քանի դեռ, այլ ոչ թե, եթե ոչ, եթե միայն, ոչ միայն, ըստ որում և այլն: Անջատ են գրվում նաև որ, թե, շաղկապներով հարադրված հետևյալ շաղկապները՝ այնպես որ, քանի որ, թե որ, հենց որ, կամ թե, ոչ թե, միայն թե, որպես թե և այլն:

<u>Ածանցավոր</u> կամ <u>բարդ ածանցավոր</u> շաղկապեր են՝ այլապես, հետևապես, հետևաբար, այսուամենայնիվ, այնուամենայնիվ և այլն:

Բարդ նախադասության մեջ մտնող բաղադրիչ նախադասություններն իրար կապող շաղկապներից առաջ դրվում է ստորակետ: Օրինակ՝ Ինձ թվում է, թե սիրտս հիմա կանգ կառնի, բայց դեռ սողում եմ:

Ծղոտներն արև են բուրում, և այդ բույրը ես այլևս չեմ զգում:

Եթե <u>և</u>, <u>ու</u>, <u>կամ</u>, շաղկապներով կապված պարզ նախադասություններից երկրորդը ուրիշ ենթակա չունի, ապա այդ շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում: Օրինակ՝ Աղվեսը եկավ և հանդեսի ժամանակ բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն և անարգեց…

Կրկնադիր շաղկապներով կապակցված համազոր ադամներն իրարից անջատվում են ստորակետներով, բացի այն դեպքից, երբ կապված են նաև և կամ ու շաղկապով. օրինակ՝ Այդ մասին չգիտեն ո՛չ դասատուները, ո՛չ տնօրենը և ո՛չ էլ ծնողները:

Զուգադիր շաղկապները կազմված են երկու տարբեր բաղադրիչներից: Լինում են թե՛ համադասական, թե՛ ստորադասական: Երկրորդ բաղադրիչից առաջ դրվում է ստորակետ. օրինակ՝ Սա ոչ թե սալոր է, այլ շլոր:

Մի շարք բառեր հանդես են գալիս թե՛ իբրև կապ, թե՛ իբրև շաղկապ, կամ իբրև մակբայ, թե՛ իբրև վերաբերական, թե՛ իբրև դերանուն, թե՛ իբրև շաղկապ: Օրինակ՝ Մինչև (կապ) հանդիպման ավարտը նա ոչ մի լուրջ քայլ չկատարեց: Մինչև (շաղկապ) նա չեկավ, վեճը չդադարեց: Էլ (մակբայ) ի՞նչ ես ուզում: Դրա համար էլ (վերաբերական) ես հրամայեցի նրան հեռանալ: Կան և հոլանի բազուկներ, և էլ (դերանուն՝ ուրիշ բառի նշանակություն) ինչեր չկան ու ի՞նչ ձևեր:

Աշակերտները կատարում են վարժություն. նշում են, թե ընդգծված բառերը որ դեպքում են գործածվել իբրև շաղկապ:

Ըստ կիրառության՝ շաղկապները լինում են մենադիր, կրկնադիր և զուգադիր: Մենադիր են միայնակ գործածվող շաղկապները. Մութն ընկավ, և բոլորը ցրվեցին: Կրկնադիր են կրկնվող շաղկապները. Նա և՛ սովորում էր, և՛ աշխատում:

Զուգադիր են որոշակի զույգերով գործածվող շաղկապները. Եթե թույլ տան, ապա կգամ: Թեև դժվար էր, սակայն կատարեցինք: Ոչ միայն եկավ, այլև բոլորին օգնեց: Ոչ թե դժգոհեք, այլ փորձեք որևէ ձևով օգնել:

Կրկնադիր շաղկապների վրա շեշտ է դրվում, և նրանց կապակցած միավորները տրոհվում են ստորակետերով: Շաղկապները նախադասության անդամ չեն համարվում:

Շաղկապը խոսքի մաս է, անկախ այն հանգամանքից, որ երբեմն այս կամ այն լեզվի այս կամ այն շաղկապը կարող է փոխարինվել քերականական որևէ այլ միջոցով:

Շաղկապների բուն էությունը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները.

1. շաղկապները առանձին, ինքնուրույն, անկախ բառեր են և, որպես այդպիսիք, ունեն իրենց բառային իմաստները,
2. շաղկապների բառային իմաստները հենց քերականական իմաստներ են:

Չունենալով նյութական իմաստ, չանվանելով առարկաներ, հատկանիշներ ու գործողություններ՝ շաղկապներն արտահայտում են վերջիններիս հարաբերությունները, որոնք բազմաթիվ են ու բազմապիսի[4]:

Գրատախտակին փակցվում է ցուցպաստառ, որտեղ գրված են նախադասություններ: Նախադասություններում ընդգծված են շաղկապները: Գնաց, որպեսզի ուսումը շարունակի (նպատակ): Հարցը սխալ լուծեց, որովհետև գրգռված էր (պատճառ): Դու զինվոր ես, ուստի պետք է կատարես հրամանը (հետևություն): Եթե հանդիպեցի, ամեն ինչ կասեմ (պայման): Ասվածներից ու օրինակներց կարելի է եզրակացնել, որ շաղկապները լեզվի համակարգում կապակցական դեր են կատարում և պատկանում են քերականական միջոցներին:

Շաղկապների բուն էությունը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները.

1. շաղկապները առանձին, ինքնուրույն, անկախ բառեր են և, որպես այդպսիք, ունեն իրենց բառային իմաստները,
2. շաղկապների բառային իմաստները հենց քերականական իմաստներ են:

Մենք գիտենք, որ կապերը ևս, հանդես գալով որպես առանձին, ինքնուրույն բառային միավորներ, զուրկ են նյութական նշանակությունից, արտահայտում ն սոսկ քերականական իմաստներ և կատարում են շարահյուսական դեր՝ դրսևորելով ստորադաս բառերի՝ գերադասների նկատմամբ ունեցած կախման զանազան հարաբերությունները:

Կապերի և շաղկապների շփման աղերսները հանդես են գալիս նաև նրանում, որ շատ դեպքերում նրանց արտահայտած հարաբերությունները նույնանում են կամ նրանց դրսևորած իմաստների միջև զուգահեռություններ են նկատվում:

Այսպիսի օրինակներ են. նպատակ-Գնաց քաղաք ուսումը շարունակելու համար// Գնաց քաղաք, որպեսզի ուսումը շարունակի: Պատճառ-Քնությունները հաջող չհանձնեց լավ չպարապելու պատճառով://Քնությունները լավ չհանձնեց, որովհետև լավ չէր պարապել: Պայման-Նրա մասնակցելու դեպքում գործը հաջողությամբ կավարտենք:// Եթե նա մասնակցի, գործը հաջողությամբ կավարտենք: Ժամանակ-Նրան տեսնելուն պես

[4]Ավետիսյան Յու.,Զաքարյան Հ.,Հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 2008թ., էջ 8:

ինձ իմաց կանես:// Հենց որ նրան տեսնես,ինձ իմաց կանես: Հակառակ հիմունք-Չնայած նրա գալուն՝գործը վատ ընթացք ստացավ: //Չնայած նա եկավ, գործը ընթացք ստացավ:

Սակայն, չնայած այս զուգահեռությանը, կապը և շաղկապը որպես խոսքի մաս չի կարելի նույնացնել, որովհետև դրանց միջև նկատվում են իմաստային ու կիրառական զգալի տարբերություններ:

Այս տարբերություններն ամենից առաջ դրսևորվում են կապերի և շաղկապների՝ որպես կապակցական բառերի, բուն ֆունկցիայի մեջ:

Ի տարբերություն կապերի՝ շաղկապները ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման, բառերի ֆունկցիայի որոշման դեր չունեն: Պարզ նախադասության կազմում նրանք իրար են շաղկապում նախադասության համազոր անդամներ կամ մասեր, որոնք գտնվում են այս կամ այն համադասական հարաբերությունների մեջ: Օրինակ՝Սուրենը և Արամը գնացին (միավորական հարաբերություն): Թե՛ Սուրենը, թե՛ Արամը գնացին (թվարկման հարաբերություն): Սուրենը կամ Արամը (տրոհման հարաբերություն):

Սակայն շաղկապների կիրառության հիմնական ոլորտը բարդ նախադասությունն է, որտեղ շաղկապները հանդես են գալիս ավելի լայն շարահյուսական-կապակցական ֆունկցիաներով՝ արտահայտելով բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների ամենաբազմազան ու տարբեր համադասական ու ստորադասական հարաբերությունները: Օրինակ՝ Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը: Գիտեմ, որ դու չես դավաճանի քո սկզբունքներին:

Այսպիսով՝ շաղկապներն ինքնուրույն գործածություն չունեն, նախադասության անդամ չեն լինում, որևէ հարց չեն ստանում, խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունեն, չեն ձևափոխվում: Շաղկապները, ինչպես և կապերը, օժանդակ՝ սպասարկու բառեր են: Ըստ գործածության լինում են.

- մենադիր (և, ու, բայց, մինչդեռ, որ, թե, որպեսզի և այլն),
- կրկնադիր (երբ նույն շաղկապը կրկնվում է կապակցվող բաղադրիչներից առաջ՝ շեշտելով թվարկվող մասերի քերականական և իմաստային համադրությունը՝ և՛…և՛, թե՛… թե՛, ո՛չ… ո՛չ, կա՛մ… կա՛մ և այլն),
- (երբ բաղադրիչների կապակցումը իրականացվում է երկու տարբեր շաղկապներով, որով զետեղվում են այդ բաղադրիչների սկզբում՝ ավելի

կուռ դարձնելով նրանց միասնությունը, ինչպես՝ ոչ թե…այլ, ոչ միայն…այլև, եթե…ապա, չնայած(որ)…բայց և այլն:Շաղկապական առաջին կամ երկրորդ բաղադրիչը կարող է կրկնվել ըստ անհրաժեշտության):

Բերենք յուրաքանչյուր տեսակից համապատասխան օրինակներ.

ա) Միերը խոսում է, իսկ ես հրակնատից դիտում եմ ադրբեջանցիների դիրքերը:

Որմնադիրն ստիպեց, որ մի բաժակ գինի խմենք:

բ) Նա և՛ ամաչում էր, և՛ բարկանում, և՛ ուզում էր ներում խնդրել, և՛ ուզում էր վրեժ առնել:

գ) Մեզ մոտ ոչ միայն արգելված էր մարմնական պատիժը, այլև հասարակ հայհոյանքի համար կարող էր դուրս թռչել պաշտոնից վարչության որևէ ներկայացուցիչ:

Գրատախտակին փակցվում է ցուցապաստառ:

Ըստ իրենց արտահայտած շարահյուսական հարաբերության շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ համադասական և ստորադասական:

Ըստ նշանակության համադասական շաղկապները լինում են՝ միավորիչ, հակադրական(ներհակական), տրոհական և որոշ վերապահությամբ՝ նաև մեկնական, իսկ ստորադասական շաղկապները՝ բացատրական, պատճառի, պայմանի, նպատակի, զիջման, ժամանակի, համեմատության և հետևանքի:

Որոշ շաղկապներ իմաստաբանական տեսակետից ավելի լիիմաստ են և իրենց գործածությամբ արդեն իսկ նշում են արտահայտվող իմաստային հարաբերությունը, ինչպես՝ իսկ,բայց, այլ, կամ, ապա թե ոչ, որովհետև, քանի որ, ուստի, թեև, թեպետ, քան թե և այլն:

Դրանք հիմնականում մենիսմաստ են: Կան սակայն շաղկապներ, որոնց արտահայտած իմաստային հարաբերությունը գերազանցապես կախված է կապակցվող բաղադրիչների բովանդակությունից և մանավանդ նրանց քերականական կառուցվածքից:

Դրանք սոսկ շարահյուսական-կապակցական դեր են կատարում և կարող են կոչվել բազմիմաստ: Այդ շաղկապները համեմատաբար քիչ են՝և, որ, թե, երբ, ապա և այլն:

Հատկապես աչքի է ընկնում որ շաղկապը,որը կարող է հանդես գալ ստորադասական շաղկապների գրեթե բոլոր նշանակություններով: Թե շաղկապը կարող

է կիրառվել թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցություններում՝ արտահայտելով բազմապիսի իմաստային հարաբերություններ:

Շաղկապները գերազանցապես դրվում են կապակցվող նախադասության սկզբում, սակայն բացառված չէ նաև որոշ շաղկապների միջադաս, երբեմն նույնիսկ ետադաս գործածությունը (Հրացանը որ տրաքեց, բոլորս վեր ցատկեցինք: Ներս մտավ թե չէ որդուն գրկեց):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ քերականական խոսքի մասերի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ նպաստում է գրավոր և բանավոր խոսքի ճիշտ կառուցմանը, հաղորդակցման գործընթացում դրանց ճիշտ գործածությանը: Ուսումնասիրության ընթացքում եկանք այն եզրակացության, որ հատկապես պետք է ուշադրություն դարձնել կապի ուսումնասիրությանը, քանի որ միջին դպրոցում դրան առաջին անգամ է անդրադարձ կատարվում: Կարևորվում է կապի հոլովառությունը, որը նպաստում է ճիշտ խնդրառության կառուցմանը, ինչի շնորհիվ էլ խոսքը դառնում է դիպուկ ու ճշգրիտ:
- Գրավոր խոսքը առավել գրագետ դարձնելու համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել կապի և շաղկապի ուղղագրությանը:
- Կապը նյութական իմաստից զուրկ է, քերականական զանազան հարաբերություններ արտահայտող խոսքի մաս: Դրվում է որևէ բառի վրա և որոշում նրա պաշտոնը նախադասության մեջ, հանդես գալիս որպես մեկ անդամ՝ կապվելով ստորոգյալի հետ պարագայական կամ խնդրային հարաբերությամբ:
- Կապերն արտահայտում են հոլովական իմաստներ՝ կատարելով հոլովական վերջավորությունների դեր:
- Շաղկապը նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է, որը իրար հետ միացնում, կապում է նախադասություններ և նախադասության համազոր անդամներ: Չունենալով նյութական իմաստ, չանվանելով առարկաներ, հատկանիշներ ու գործողություններ' շաղկապը արտահայտում է վերջիններիս բազմաթիվ ու բազմապիսի հարաբերությունները:
- Որպես լեզվական միավորներ' շաղկապները ունեն իրենց յուրահատուկ իմաստներն ու շարահյուսական կիրառության ոլորտները: Սրանք, ինչպես և կապերը, մտնում են քերականական իմաստ արտահայտող խոսքիմասային

բառախմբի մեջ և զուրկ լինելով նյութական նշանակությունից՝ կատարում են սոսկ շարահյուսական, կապակցական դեր:

- Ի տարբերություն կապերի՝ շաղկապները ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման, բառերի ֆունկցիայի որոշման դեր չունեն: Պարզ նախադասության կազմում նրանք իրար են շաղկապում նախադասության համազոր անդամներ կամ մասեր, որոնք գտնվում են այս կամ այն համադասական հարաբերությունների մեջ: Օրինակ՝ Սուրենը և Արամը գնացին (միավորական հարաբերություն): Թե՛ Սուրենը, թե՛ Արամը գնացին (թվարկման հարաբերություն): Սուրենը կամ Արամը (տրոհման հարաբերություն):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970թ.:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1976թ.:
3. Ավետիսյան Յու.,Զաքարյան Հ.,Հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 2008թ.:
4. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992թ.: